

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐԻՍՏԱԿԵՍ եպ. ՍԵՐԻԱԿԱԿԱՆ ամսիս 11-ին էատ ուղևորւեց Թիֆլիսի զէպի էջմիածին:

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ.—Սըրբազն Արիստակէսը ներկայումս, ի ուշի ազոց, զբաղւած է մի ընդարձակ գրական քննադատութիւնով Յարութիւն Արարատեանի և սորա ինքնակենսազրութեան մասին, (հրատարակութիւն Թիֆլ. Հրատարակչական Ընկերութեան). Հեղինակը եկել է այն եզրակացութեան, որ Յարութիւն Արարատեանը բաղդախնդրին և կեղծողին մէկն է և որ նորա գրւածքը մի միստիֆիկացիա է: Պէտք է կտրծել որ սրբ. Արիստակէսի աշխատութիւնը մնձ լուս մի ափակ պատմական ան լրջանի վրա, որին վերաբերում են Արարատեանի պատմած սուսաթէ ըղորդ անցքերը:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ, վերասուզած և լրացած նոր ցուցակների համեմատ, իրաւունք ունեն մասնակցելու 2,590 հոգի:

ԲԱՔԻՒ ՆԱԽԹԱՑԷՐԵԲԻ ՍԻՆԴԵԿԱՏԻ խնդրիը ակժմ արդէն վերջնականապէս վճռւած է այն համաձայնութեամբ որ կալացել է Նորէլի և Ռոտչիլդի ֆիրմաների մէջ: Նորէլի ֆիրման ներկայացուցիչ է հանդիսանում Բաքվի եօթ մեծ ֆիրմանների, որոնց համապատասխան կապեց դեռ ևս 1892 թ. վերջը Ռոսառում Նորէլի և Ռոտչիլդի հետ կալացրած համաձայնութիւնը կալանում է նրանում, որ Նորէլը իւր զաշնակիցներով միակ իրաւունք ունի Ռուսաստանի սահմանների մէջ Բաքվի նաւթը ծախել. իսկ արտասահմանում Նորէլը և Ռոտչիլդը որոշել են ամեն մէկի առևտորի սահմանները:

Ա. ԴԻՒԼԶԱՏԵԱՆՑ, պարսկական «Շահնամէ»-ի հակ թարգմանչի, Շուշը գրած նամակից քաղում ենք հետեւալը: «Դուք լսած կը վնէք, որ մօտ երեք տարի է, ինչ ես ձեռնարկել իմ պարսկ. Շահնամէ ավագից թարգմանութիւններ անել և իբր սկիզբ՝ ՁԻՌԱՍՏ և ՍՈՒՐԱԲ» վէպը: Այս թարգմանութեան գլխաւոր շարժառիթը ինձ

տեղ Ձեր «Մուրճ»-ի մէջ իմ կարդացած մի կարճառօտքննադասական լոգւածը պ. Փիլ. Վարդանեանցի մի գերմանական գրմթէ ինքնապրած «Խուստէմ և Զոհրաբ»-ի թարգմանութեան մասին, Ազդ առթիւ «Մուրճ»-ի լոգւածագիր (Ա. Ա.) ցանկանում էր որ ազդ պարսկ. լաւոնի նշանաւոր գրւածքի կասփիկան ընագրից մի ամենամօտիկ թարգմանութիւն լինի Ազդ ժամանակից ես իմ արձակուրդների ազատ և հանգստեան ժամանակից զիշեր ցերեկ զանեցի ազդ դժւար գործին, ցագժմ թարգմանելով նաև երեք ուրիշ հետաքրքրական վէպեր և բազմաթիւ գարակից հաստածներու Ազդ վէպերից երկուքը բովանդակում են շատ հետաքրքրական բաներ և հարցեր զաղթական գողթնեցց իրենց մէջ հատ ու կտորով պահած հին (թւելիք կոչւած) վիպասանութեան վերաբերեալ թարգմանածներս հասնում են աւելի քան 15.000 տող ստանաւորի, առհասարակ 15 վանկեանու:

Առիթից օգտառմ ենք լավանելու որ պ. Գիւլզատեանցի զրքից «Մուրճ»-ի խմբագրութիւնը չի ստացած:

ՀՅԱ.Ա.ԲԱՑԻՆ Վ.Ա.ՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ (Թիֆլիսում) ամսիս 12-ին ունեցաւ իւր տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակից էին մօտ 50 հաւատարմատարներու ժողովին իբր հանդիսատես հաւաքւել էր մեծ հասարակութիւն: Ընկերութեան կառավարիչն է իշխան Նատոլիոն Ամատունին, որը ազդ հիմնարկութեան զլուկու է հիմնելու օրից, 12 տարի շարունակ: Ազդ հիմնարկութիւնը մինչ ալժմ, ալլ և ալլ տարիներում, ունեցել է շատ չաձախ ազմկալի ժողովներ, որոնց զլսաւոր առարկան եղել է իշխան, Ամատունու անձնաւորութիւնը: Ալս անդամ զլսաւոր քննադասողը կառավարչի գործողութիւնների հանդիսացաւ ընկերութեան գանձապահ երիտասարդ Նազարէթ Տիգրանեանը, որը մի քանի ամիս սորանից առաջ հրաւիրեց կառավարութեան ուշադրութիւնը ազդ հիմնարկութեան մէջ կատարած զեղծումների վրայ: Մինիստրական ընւիզիան հաստատեց, որ ընկերութեան արդէն հեռացած դիրեկտորներից մէկը, պ. Գ., օրլիզացիաների հանդցրած կուպաններից օգտառմ է եղել, ատօքինի կերպով ստանալով իւր սեպհական օգտին ընկերութեան գանձարանից առնապն մօտ 22 հազար ոռութիւն, բայց զուցէ և գորանից շատ աւելի: Թէ ինչպէս է ներկալում ընկերութեան խկական դրութիւնը, արդ չէր կարելի իմանալ ընկերութեան վարչութեան ներկալացրած հաշվւներից, հաշվւներ, որոնք կազմւած էին խարսավիկ ձևով: Պարտք ենք

համարում վկալելոր ամբողջ հասարակութիւնը վերաբերում  
էր դէպիալնիկերութիւն զեկավար իշխան Ամառունին վերին  
աստիճանի անհաւատ կերպով, և մենք, որ աշխատում էինք  
զսպել մեզ որ և է կողմնակցութիւնից, եկանք այն համոզմանը,  
որ այդ անհաւատութիւնը բոլորովին արդարացի էր. Ագդ ան-  
հաւատութիւնը տարածում էր ոչ միայն իշխան Ամառունու,  
այլ և հաւատարմատարների այն մեծամասնութեան վերակ, որի  
վրաւ լուս դրած իշխան Ամառունին ամենալն սառնասրաւու-  
թեամբ նեղնուում էր ամեն մի արդարացի նկատողութիւն, որ  
անուում էր փոքրամամութեան կողմից, Շնորհիւ այդ հանգա-  
մանքի՝ ամբողջ նիստը մի ներկալացումն էր, ուր հասարակու-  
թիւնը եկել էր կարծես ճարպիկութեան դասեր առնելու Ամեն  
մի ուրիշ հանգամանքում մեծամասնութեան տրամադրութիւնը  
թէև տարբեր չափսերով բաց և աղճպէս մի ուղեցուց է հա-  
սարակաց կարծիքի. բայց ներկաւ դէպքում՝ մեծամասնու-  
թիւնը ներկալացնուում էր մի մասսա՝ որը ըստ երևու-  
թին որ և է հաշիւներով կապւած է ընկերութեան զեկա-  
վարի հետ—Ըսկերութեան ներքին դրութիւնը, չնորհիւ այդ  
բանի, մնաց հասարակութեան համար բոլորովին քօղարկւած,  
ոչ մի հաւատ չընծավելով անկեղծութեանը թէ ներկալացրած  
հաշիւների, թէ տեղի ունեցած վիճաբանութիւններին և թէ  
կատարւած քէարկութիւններին, Նիստը բացեց ոչ կանոնա-  
դրութիւնից պահանջւած 72 հոգու ներկալութեամբ, այլ մի  
հրահանգի հիման վերաբ որի ծագման, գոլութեան և  
օրինաւրութեան մասին շատ զարմանալի մերկացումներ  
եղան նոյն իսկ ժողովի մէջ, մի հրահանգ, որը իբր թէ  
ընդունել էր անցեալ տարւակ ժողովում, բայց որը նոյն այն  
նախկին ժողովի նախագահի կողմից իբր նեն գ վկալւեց, այն  
աստիճան այդ հրահանգի համար հաւանութիւն ստանալը ընդ-  
հանուր ժողովից գաղտնիքի բնաւորութիւն է կրել և անկանոն  
կերպով է կատարւել Արդէն ազն հանգամանքը, որ մի վարկա-  
վին ընկերութեան համար մեծ կարևորութիւն ունեցող ինսա-  
րութիւն, որ համազօր է կանոնադրութեանը, ընկերութեան  
կառավարչի վարւողութեան պատճառով կարող էր այդ աստի-  
ճանի հանելուկավին միջոցներով գլուխ գալ և ապօրինի գո-  
լութիւն ունենալ, այդ միակ հանգամանքը, ասում ենք մենք,  
բաւական է որոշելու համար իշխան Ամառունու կառավարու-  
թեան ամբողջ պատկերը.

Հետևապէս աւելորդ է կանգ առնել ամեն մի հարցի

վրան որի համար ընկերութեան վարչութիւնից բաւարար պատասխան չը ստացէմց Որտեղ տիրում է գաղտնիքը և անհաւատութիւնը ամբողջութեան նկատմամբ, անտեղ մանրամասնութիւնները կորցնում են իրանց հետաքրքրութիւնը:

Որովհետև այս ամենը կատարում է ան վատահութեան պատճառով, որ իշխ. Ամաստունին ունի հաւատարմատարների ժողովի մեծամասնութեան վերան որոնց արդարացի կերպով ավարժւած փղերին անուն են տւել, ազդ պատճառով ընկերութեան ազատումը գալիք չարիքներից կարելի է սպասել, եթէ միան 12 ապր. ժողովը ապօրինի ճանաչելուց լիառի, ներկակ հաւատարմատէրները զրկւեն իրանց կոչումից և, կառավարութեան կարգադրութեամբ, ընկերութեան փոխառումները կոչմն նորից հաւատարմատարներ ընտրելու, ապահովելով միանգաման նաև ազդ ընտրութեան կանոնաւորութիւնը:

Իսկ դորա համար նախաձեռնող պէտք է լինեն քաղաք. վարկի ընկերութեան փոխառուները, եթէ դոցա մեծամասնութիւնը ստորագրուի մի թղթի, ուր արտավագաւած կը լինի թէ նոքա ալ ևս հաւատ չունեն դէպի իրանց հաւատարմատարները Աւդ թուղթը կցերով մի խնդիրքի հետ պ. Փինանսական մինիստրին ուղղած, ազդ մասին կարգադրութիւն անելու մասին՝ ապահովագոյն միջոցն է ցանկալի նպատակին հասնելու:

**ՀՐԱՆՏ ՄԱՍՊՈՒՐԵԱՆ.** — Խմբագրութեանս մէջ ստացւած են մեզ անլավութիւն 82—92 երորդ էջերը պարունակող թերթիկները, որոնց մէջ գտնում ենք երկու լողած, սոցանից մէկը ստորագրած է Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրագեանց, միւսը՝ Հրանտ Մամուրեան. առաջինը վերաբերում է նորին սրբազնութեան «Հովուական աստածաբանութիւն» գրքին, միւաը մի գրութիւն է ան նկատողութեան առթիւ, որ տպմաց «Մուրճ» 1893 № 1, «Զանազան լուրերու-ում», «Մուրճ.ը Զմիւռնիալում» խորագրով. Հրանտ Մամուրեանի լողածը միջատապովութիւն է Մատթէոս Մամուրեանի դպրոցի և ուղղութեան: Մենք գուցէ զես լւա չենք հասկացել պ. Մամուրեանի ուղղութիւնը, բայց եթէ պ. Հրանտ Մամուրեանը ազդ հոչակւած գրագէտի աշակերտն է եղած, պէտք է խոստովանենք որ նա մեր ձեռքը նոր նիւթ է տալիս ազդ ուղղութիւնը ճանաչելու համար: Պէտք էր կարծել, որ մի կենդանի ինտելիգէնտ հասարակութիւն մի գրականութիւն գլխաւորապէս սորա ոգու, ուղղութեան և բովանդակութեան համար պիտի սիրէր և լարգէր բայց պ. Հ. Մամուրեանը ան մարդկանցից չէ, որ լեզու են

ուսանում բան հասկանալու համար. նորա համար ոչ մի հետաքրքրութիւն չունի մի երկրի կեանքը, լինէր ազդ երկիրը նոյն իսկ իւր սեպհական մալր-հալրենիքը, եթէ միայն նորա դրական լեզուն պոլսականը չէ! Մամուրեանները հետաքրքրութիւն չունեն մտքի զարգացման համար, նոյս չի հետաքրքրքը ըստ մեր մատաղ գրականութեան զարգացումը, և գրականութիւն ասւած բանի մէջ նոքա չն որոնում մտքեր, ազ միայն լեզու Ալլապէս ինչպէս կարող էր պատահել, որ պէ. Մատթէոս Մամուրեանին պաշտպանող պէ. Հրանտ Մամուրեանը հրապարակով խոստովանէր, թէ նա ինքը չի կարգում «Մուլժուր» միմիայն նրա համար, որ ազդ ամսագրի լեզուն արենելեան հալոց գրական լեզուն է: Մամուրեանների գալրոցը մի ակնպիսի դպրոց է, որ չի թելալըում իւր աշակերտներին վարժւել և հասկանալ արենելեան հալոց լեզուն ու գրականութիւնը, ազ արդ դպրոցը քարոզում է եղել ու քարոզում է ակժմ ևս թքել արենելեան հալոց գրականութեան ու մամուլի վերաբ որովհետև ազդ լեզուն առողջ և հիմնովին օտարութի ու հետեապէս անհասկանալի է»: Ինչու արդեօք մի հավական գործիչ բանը ախտեղ պիտի հասցնէր, որ իւր ազդի կէս մասի գրական լեզուն սիմովին օտարութի ու հետեապէս անհասկանալին մնար իւր բազմաթիւ աշակերտների համար: Ինչու ան պատճառով որ Մամուրեանի գալրոցում փոխանակ մնր լեզվին վարժեցնելու, ուղղակի քարոզում է եղել աշակերտներին թէ արենելեան հալոց գրական լեզուն «ալլանդակ ու անհոռնի գաւառաբարբառ. է»:

**ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ** Թիւրքիակի կրթական նախարարութիւնը, առանց Հալոց Պատրիարքարանի միջնորդութեան, սկսել է ուղղակի հաջորդակցութեան մէջ մտնել և հրահանգներ տալ Պոլսի իւրաքանչիւր եկեղեցու աւագերեց քահանակին, պատասխանառու և տնօրէն ձանաշելով իրան իւր թաղի հաէ վարժարանին: Ազդ քահանաներից շատերը, որոնք մինչև անդամ դպրոցի պաշտօնին անհմուտ մարդիկ են, շւարւած դիմել են պատրիարքարան: Աերջինս ապ նկատմամբ ընդհանուր հրահանգ է ուղարկելու աւագերէցներին: Ակսպիսով ուղեմն հալոց եկեղեցիներին կից շինւած ազգավին վարժարանները ԱզգակինՊատրիարքարանի իրաւասութիւնից դուրս գալով, ուղղակի թիւրք Մէարիֆ ժողովի իրաւասութեանն են ենթարկուամ:

Ցուների Պատրիարքը, վարժարանների և վարժապեանների

յուցակը Մէարիֆին տալով հանդերձ, լատնել է թէ ըռլոր տէն վարժարանների համար պատասխանատուն ինքն է և էջքը իւր վստահութեան արժանի անձեր, աշխարհական կամ եկեղեցական, նոցա տնօրին է կարգել և պիտի կարգէ, և հասեապէս նոքա ուղղակի իւր իրաւասութեան ենթարկւած պէտք է մասն:

ԿՈՆԴԱՐԵՄՆՅԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐ. Հիափափին գոր. ծակալութեան հեռազբով կ. Պոլսից, 30-ր մարտի, հաղորդմաց հեռեալը՝ «Որպէս լսում է, Անգլիան մոտազիր է առաջարկել որևտութիւններին ժողովւել կոնֆերենցի, Հայաստանի գործերը քննելու համար Քաղաքական լանցանքների համար նորերում ձեռակալւած հակերի թիւը, որպէս լսում է, հասնում է 1,800 հոդուու—Ապա հեռազիրը 2-ից ապրիլի հաղորդեց Լոնդոնից. առամանքների ժողովում արտաք. զործ. մինիստրի օգնական Դրէլ լայտնեց, թէ չի ստացւած ոչ մի լուր նորաւուրց սպանութիւնների մասին, բաց թէ Տաճկաստանի հայ հայաստակերից շատերը ձեռքբակալւել են ապստամբութեան մեղադրանքավ. Կառավարութեանը հաւաստիութիւն է արւած, որ բալոր հակերին ներումն է չնորմելու, բացի նրանցից, որոնք պալլամացիաներ կպցրեցին, բաց և սոցա քննութիւնը կը կատարվի արդարութիւնը ապահովող կերպով. Վերջը Գրէլ առաց, թէ՝ կոնֆերենցիա ժողովներ դիտաւորութիւն չունի կուտափարութիւնը»:

ԽԲԻԵՐԸ ՀԱՅԹԻԿԻ ԾՆՆԴԵԱՆ 73-րդ տարեդարձի առիթով Թիֆլիսից ուղարկեց նաև մեր կողմից Երուսաղեմ հեռազիրը.

Jérusalem, Sa Sainteté Khrimian, copie au Patriarche arménien Arouthbioun. au Jour de la naissance de notre trèscher Haïrik prions Dieu conserver vos jours pour le bien de la nation, de la partie et de l'église.

(Երուսաղէմ, Նորին Սրբութիւն Խրիմեանին, պատճենը Հայոց Պատրիարք Յարութիւնին:

Մեր չառ թանկագին Հայրիկի ծննդեան օրը ազօթում ենք Աստուծուն որ պահպանի Ձեր օրերը ազգի, հայունիքի և եկեղեցու բարգաւաճման համար:

Հեռազիրը ուղարկւած էր մի խումբ անձերի անունից: + ԽԾ ԱԼԵՆԱՍԱՆԴՐ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԴՐԱՆԴՈՒԿՈՎ.՝ ԿՈՐՍԱԿՈՎ, Կովկասի նախկին կառավարչապետ (1882—1891) վախճանմաց ներկաւ 1893 թ. ապր. 15-ին, Ռուսաստանի Պակովի նահանգի Վալնակա գիւղում, սեփական կալւածքում:

ՆԵԿՈՂԱՑՈՍ ԲԱՐԱԹԱՇԻՒԼԻ. Ներկաւ ապրիլի 25-ին փառաւոր հանդիպով կատարեց վրաց բաճաստեղծ Բարաթաշվիլու ամիսնի տեղափոխումը Գանձակից Թիֆլիս, ուր և ամփոփմաց Դիլուքէի վրաց եկեղեցու բակում Բարաթաշվիլու անունը կապւած է վրաց գրականութեան մի ամբողջ շրջանի և գաղափարական ուղղութեան հետ Բարաթաշվիլու բանաստեղծութիւնը մուղիկափին չէ, ինչպէս օրինակ Ակակի Ծերեթելուն է, բայց զօրեղ է, մեքը զգացմունքով և մտածել տւող, Նա էր որ առաջինը արծարծեց առողջ ազգասիրական զգացմունք վրաց գրականութեան մէջ իւր հռչակաւոր պօէմակուր Քնդի Քարտիսա» (Վրաստանի ճակատագիրը), Նա վաղաժամ մնուաւ քառասնական թւականներին 29 տարեկան հասակում, բայց թողեց խորը հետք վրաց նորագոյն գրականութեան մէջ, Նո ծննդց 1816թ. և մեռաւ 1845թ. վրացիների համար օտար Գանձակ քաղաքում, Նորա ամիւնը տեղափոխելու միաբը վաղուց էր լարուցւած, բայց միան տարիներից իւսու իրազործւց ներկաւ ամսի 25-ին, Ամիւնը փոխազրւեց նոր դագաղի մէջ. վրաց ազնւականութիւնը և միջին դասակարգը մնծ բազմութեամբ հանդիպեցին երկաթուղու կալարանում սպաւոր զնացքին և հոգնորականութեան, կանանց ու տղանց երգեցիկ խմբերի ուղեկցութեամբ դագաղը տարւեց Դիլուքէ, Դիակառը զարգարւած էր վիսունից աւելի սպակներով ազգականների և առ և առ հիմնարկութիւնների կողմից որսնց մէջ նաև հազկական խմբազրութիւններից երկուսը ձառ խօսնցին՝ Ակակի Ծերեթելի, Խիմ Ճաւաւաւձէ, Գէորգ Ծերեթելի, Խշխանուհի Նիհա Օրբելեանի, Քութափսի քաղաքագլուխ պ. Լոլուա, Քութափսի ազնւականութեան հաւատարմատար Դ. Բակրաձէ, պ. Յ. Թումանեանց, իրք ներկալացցիչ «Մուրճ» ամսագրի, գնդապես իշխ. Բիձինա Զելովան և ափկին Զապարիձէ, Պր. Թումանեանցի արտասանածը «Մուրճ»-ի ներկաւ Նեռու տպւած ոտանաւորն է, որից կա կարգագրիչ լանձնաժողովի անդամներից պ. Ախնաղարով կարդաց վրացերէն թարգմանութիւնը.

**ԹՐԳԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** ԳՐԱԳԻՑՈՒԹԻՒՆ ՏԱՐԱՆԵԼՈՒ համար Բաքվի մի քանի առաջաւոր թուրքեր նորերս ներկալացրել են իրանց նահանգապետին իրանց կազմած մի կանոնադրութիւն՝ թուրքերի մէջ գրագիտութիւն տարածելու Ընկերութեան համար, և խողբել են որ կանոնադրութիւնը ներկալացնաւի բարձրագուն իշխանութեանի հաստատութիւն.

**ԹՐՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ՏԱՄԱԱՄՄԵՍԱՆ.** Ներկաւ ապրիլ ամսի 10-ին թուրք ինտելիգենտ հասարակութեան համար մի տօն էր, Ազդ օրը լրացրեց իւր տասնամենաէ շրջանը՝ Ղրիմի Բախչիսարակ քաղաքում հրատարակուող ռուս-թքական «Թարջիման» (թարգման) լրագիրը, որի հիմնողն ու ցավմենան խմբագիրն է Խամալիլ-բէկ Գասպրինսկի, Թուրք խմբագիր-գործիչի ջանքերը գնահատելու համար բաւական է ասել, որ սկզբում ոչ մի պատրաստականութիւն չգտնելով թուրք հասարակութեան մէջ մի լրագիր հրատարակելու համար, թէ աշխատակիցների և թէ ընթերցող ների կողմից, այդ թիրթը ներկալում ունի 1600 բաժանորդ։ Պր. Գասպարինսկին միննուն ժամանակ ներկալանում է որպէս վերանորոգող թրքական տարրական դպրոցների (մէկտէբէ), 1885-ին նա բացեց Բախչիսարակում մի մէկտէբէ, տղաների համար, ուր լեզվի ուսումը հիմնաւծ էր Հնչինարանական մեթոդի վրա, համաձայն իւր կազմած դասագրքի։ Ազմ ավագիսի դպրոցների թիւը համանում է 60-ին, նոյն Գասպարինսկու շնորհիւ Բախչիսարակում նորերս հիմնեց աղջիկների տարրական դպրոց։ «Թարջիման» լրագրի աղջեցութեամբ թուրք լեզով հրատարակմէ են նաև գրականական և աշխարհական բնաւորութեամբ մի քանի գրքեր։

**ԹԱՆԳՈՒԹԻՒՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՂԻ ԳԱԽԱՌՈՒՄ.** Ալեքսանդրապողի գաւառից սասացում են լուրեր անտեղ տիրոջ թանգութեան մասին, Դարձնում ենք Ս. Էջմիածնի և Հալոց Բարեգործական Ընկերութեան ուշադրութիւնը այդ հանգամանքի վրա և Ընկերութեան անդամներից ոմանք արդէն իսկ թուղթ են ներկալացրել Խորհրդին ընդհանուր ժողով գումարելու առաջարկով։ **ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՒՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ խորհրդից սասացանք 24-ն ապրիլի 1893.թ. № 139 թւագրած հետեւել երկու գրութիւնները հրատարակելու խնդիրքով։**

## I

**Հալոց Բարեգ. Ընկերութիւնը կովկասում հականում է որ Ընկերութեան Շուշու ճիւղը ձեռնարկած լինելով ժողովրդական գրքերի հրատարակութեան, հեղինակները և թարգմանիչները հրաւիրում են ներկալացնել Շուշու տեղական վարչութեանը իրանց աշխատառութիւնները, որնք, հաւանութիւն գըտնելու գէպքում, կը տպագրեն և հեղինակներն ու թարգմանիչները կը ստանան վարձատրութիւն ինքնուրուն աշխատութիւնների համար տպագրական թերթին 20—25 ռ., թարգ-**

մանականի համար 15—20 ու. Հրատարակելի գրքերը կարող են լինել 1) վկանական, 2) գիտութեան ալլ և ալլ ճիշերին վերաբերեալ ժողովրականացրած գրւածներ և 3) գիւղատնտեսական,

## II

Թիֆլիսեցի վաճառական Կարապետ Վարդանեան և Շուշւակ քաղաքացի պ. Յովհաննէս Ադամեան ընտրել են Քարեգ. Ընկերութեան մշտական անդամ, ի նկատի ունենալով որ առաջինը նվիրել է Ընկերութեանը 300 ո., և երկրորդը՝ 600 ո. (որով գրքեր են գնաւած Շուշու ընթերցարանի համար).

Նախագահ՝ Ա. Անանեանց,

Քարտուղար՝ Հ. Առաքելեան,

ՎՐԻՊԱԿ: «Մուրճ» № 2, Լուսինի Ժամանակակից տեսութեան մէջ, մի երկու տեղ սխալմամբ ասւած է՝ «1884 և 1886 թ. կաթող. ընտրութիւնները» պէտք է լինի՝ 1884 և 1885 թ. կաթող. ընտրութիւնները, որոնցից առաջնում ընտրւեց Ներսէս Վարժապետեան, երկրորդում՝ Մելիքսենէկ եպ. Մուրադեան.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ԳՐՔԵՐԻ

- 1) ՌԱՖՖԻ.—«Կայձեր», առաջին հասորը. Երկրորդ տպագրութիւն. Թիֆլիս, տպ. Ա. Վարդանեանի, 1893 թ., գինն է 2 ռուբլի.
- 2) ԱՍՔԱՆԱԶ.—Փամբակեցի. —«Ով կարգա--նա մարդ առ Հրատ. Պետք Տէր-Մատթէոսեան Հայկազունու. Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1893 թ., գինն է 7 կոպ.
- 3) ՍԱՐԳԻՍԵԱՆ, Հ. Բարսեղ Վենեսէկի Միսիթ. ուխտէն. —«Ուսումնասիրութիւն Մանիքէա—Պաւղիկեան Թոնրակեցիններու աղանդին և Գ. Ներեկացու թուղթը» Վենետիկ, տպ. Ար. Վաղարշու, 1893 թ., գինն է?
- 4) L'ARMENO—VENETO.—Compendio storico e documenti delle relazioni degli armeni coi veneriani. primo periodo. secoli XIII—IV. Venezia, stab. tip. armeno—S. Lazzaro. 1893 թ., գինն է 3 ֆր. 50 կոպէկ.
- 5) ԱՅՎԱԶԵԱՆ, Աբրահամ, Յ.—«Եար հակ կենսագրութեանցու Կ. Պոլիս, տպ. Գ. Պաղասաւեան, 1893 թ., գինն է?
- 6) ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ, Ն. —«Աշխարհաբարի քերականութիւնը (ամբողջութեամբ)»: Շուշի, տպ. Մահամիթ-Եակովեանցի, 1893 թ., գինն
- 7) CHALATHIANZ, Gregor.—„Zur Erklärung der armenischen Geschichte des Moses von Choren“.

- 8) ԲԱԼԱԳՆԵԱՆ, Ա. և ՔԱԼԱՆԹԱՐ, Ա. — «Պաստեօր» (նորա 70-ամեակի առիթովի). — Թիֆլիս Հրատ. Ընկ. հրատարակութիւն, Թիֆլիս, տպ. Շարաձէի, 1893 թ., գինն է 20 կոպ. (պատկերով).
- 9) ՇԱՀԱԶԻԶԵԱՆ, Սմբատ. — «Յորելեանի Տարեդարձ» Մոսկվա, 1893 թ., տպ. Մ. Բարխոսուզարեանի.
- 10) ՍԱՀԱԿԵԱՆՑ, Սահակ քահանակ. — «Դասագիրք կրօնի» ուղեցուց հակ կրօնոսալցնդրի համար, Նոր-Ռէփատի մշակութիւնը, Հատոր բ., մասն Ա, տետր Ա. Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1893 թ., գինն է 50 կ.:
- 11) ԳԱԼԻՄԻՔԵՐԵԱՆ, Հ. Գրիգորիս վարդապետ, Մխիթարեան ուխտէ. — Ազօք ս. Պատարագի «Որ օրէնքս զանոսիկ» ի վսուն լեզու,
- սեպհական տառիւք իւրաքանչիւր լեզվի. բ. տպագրութիւն,
- ի Վլիւննա, մի Մխիթարեան տպարանի, 1893 թ., գինն է?
- 12) ՏԵՐ-ԱԽԵՏԻՔԵԱՆ. — «Վերածնութեան դար» Թիֆլիս, տպ. Շարաձէի, գինն է 1 ռուբլի.
- 13) ԲԱՖՖԻ. — «Վ. Հայիկներ և պատկերներ» (տպւած և անտիպ աշխատութիւններից). Հատոր երկրորդ, Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1893 թ., գինն է 2 ռուբլի: